ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2022թվականի N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2021թվականի նոյեմբերի 17-ի 44-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 16-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման 1-ին կետում «290000» թիվը փոխարինել «390000» թվով, հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի ապրիլի 15-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԶԻԿ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՐԱԳԱԾ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2022թ. ապրիլի 14-ի N 27-Ա որոշման
Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2022թ. մարտի 10-ի N 16-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 44
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) (ՀՀ դրամ)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	1	390000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	1	310000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	196000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	114000
5	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	114000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	1	97000
	ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
7	Վարչական ղեկավար /Կոռնիձոր, Խնածախ բնակավայրերի/	2	1	196000
8	Վարչական ղեկավար /Խոզնավար, Վաղատուր, Քարաշեն, Առավուս բնակավայրերի/	4	1	180000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
9	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	310000
10	Գլխավոր մասնագետ-հաշվապահ (2.3-1)	1	1	300000
11	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	1	150000
12	Առաջատար մասնագետ (3.1-2)	1	1	150000
13	Առաջատար մասնագետ (3.1-3)	1	1	150000
14	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	1	133000
15	1-ին կարգի մասնագետ (3.2-2)	1	1	133000
16	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	1	114000
17	2-րդ կարգի մասնագետ (3.3-2)	1	1	114000
18	2-րդ կարգի մասնագետ (3.3-3)	1	1	114000
19	2-րդ կարգի մասնագետ (3.3-4)	1	1	114000
20	2-րդ կարգի մասնագետ (3.3-5)	1	1	114000
21	2-րդ կարգի մասնագետ (3.3-6)	1	1	114000
22	2-րդ կարգի մասնագետ (3.3-7)	1	1	114000
23	2-րդ կարգի մասնագետ (3.3-8)	1	1	114000
24	2-րդ կարգի մասնագետ (3.3-9)	1	1	114000
25	2-րդ կարգի մասնագետ (3.3-10)	1	1	114000
26	2-րդ կարգի մասնագետ (3.3-11)	1	1	114000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
27	Տեղի համայնքապետարանի գործավար	1	1	97000
28	Տեղի մշակույթի տան ակումբավար	1	1	91275
29	Տեղի մշակույթի տան հսկիչ	1	1	88312
30	Կոռնիձորի մշակույթի տան ակումբավար	1	1	91275
31	Տեղ գյուղի գրադարանավար	1	1	88312
32	Կոռնիձոր գյուղի գրադարանավար	1	1	91275
33	Տեղի համայնքապետարանի հավաքարար	1	1	88312
34	Տեղի մշակույթի տան հավաքարար	1	1	88312
35	Կոռնիձորի մշակույթի տան հավաքարար	1	1	88312
36	Տնտեսվար	1	1	88312
37	Էլեկտրիկ	1	1	88312
38	Պահակ	1	1	88312
39	Վարորդ	1	1	100000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
40	Անասնաբույժ	1	1	150000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**44**		**6240321**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմը ձևավորվել է 2016 թվականի նոյեմբերի 1-ին: Համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատվել են ըստ նախնական տեսակետներով ձևավորված գործառույթների հիման վրա: Քանի որ գործառույթների տեսակներն ու քանակն ավելացել են, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայելու նախկինում եղած համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը, ինչպես նաև համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում կատարել փոփոխություններ՝ ըստ գործնականում կիրառվող գործառույթների: Ծառայություններ մատուցող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հաստիքները նույնպես ձևավորվել էին նախկինում և ներկայումս ետ են մնացել նոր խնդիրների լուծման պահանջների կատարումից:

2021 թվականի հոկտեմբերի 17-ին Տեղ համայնքում անցկացված համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքում ձևավորվեց համայնքի ավագանու կազմը, ընտրվեց նոր համայնքի ղեկավար, որն էլ աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դյույքաչափերը ներկայացրել է համանքի ավագանու հաստատմանը:

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարվել են փոփոխություններ ՝ հաշվի առնելով վարչատարածքային բարեփոխումների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և գործառույթների կարևորությունը:

Համաձայն վերագրյալի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված, **տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքները համայնքային խնդիրների լուծմանը համապատասխանեցնելու** սկզբունքի տրամաբանությունից ելնելով, համայնքապետարանի աշխատակազմում նախատեսվել են որոշակի փոփոխություններ՝ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 290000 ՀՀ դրամից դարձնել 390000 ՀՀ դրամ, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակազմում նախատեսվում է ավելացնել մեկ հաստիք /Կոռնիձոր գյուղի գրադարանավար/, որպեսզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում գործի նոր գրադարան, որտեղ և պիտի աշխատի 44-օրյա պատերազմի մասնակից մեր հերոս տղաներից Հայկ Ալեքսանյանը, ով պատերազմում ծանր վիրավորվելով ամբողջ կյանքում ի վիճակի չի լինելու կատարել ծանր ֆիզիկական աշխատանք: Մյուս կողմից, քանի որ համայնքի ղեկավարը պարտավոր է աջակցել, որ համայնքի ֆիզիկապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձիք առավել

մեծ չափերով ինտեգրվեն համայնքի սոցիալ-մշակութային, ինչու չէ նաև համայնքի կառավարման գործընթացին: <<Կարմիր Խաչի>> միջազգային կոմիտեն պատրաստակամ է գրադարանին գույքով և անհրաժեշտ տեխնիկայով ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Տեղ համայնքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Տեղ համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**